01 ապրիլի 2021թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 012048/16

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 01.04.2021 թվականի թիվ 12048 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ _____ վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Վաչագան Գասպարյանը /ՀՎՀՀ՝ 66834292, հասցե՝ Լոռու մարզ, Վահագնի, 1փ. տ.55, անձն. տվ. AE0622849, ՀԾՀ՝ 2407560094/ ՀՀ Հարկային օրենսգրքի 270-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ 2020 թվականի հաշվետվությունը, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Կողմին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգում առկա տվյալների ուսումնասիրությունից պարզվել է, որ Ա/Ձ Վաչագան Գասպարյանի կողմից 2020 թվականի միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է 04.03.2021թվականին:

Արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվությունից վճարման ենթակա հարկի գումար չի առաջանում, ինչպես նաև վերոնշված հաշվարկը 01.04.2021 թվականի դրությամբ արդեն իսկ ներկայացված է, ուստի վերջինիս կողմից թույլ տրված իրավախախտումը ունի նվազ նշանակություն:

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21 հոդվածով, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244[2] հոդվածով, 282 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 21 հոդվածի՝ Վաչագան Գասպարյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն:
2. Վաչագան Գասպարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

<u>Ծանոթություն.</u> Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այդ պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40):
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու /հանձնված համարվելու/ օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ _____
(ստորագրություն)

Ստացա որոշման պատճենը_____